ՍԴ/0160/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 դեկտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

Ուսումնասիրելով թիվ ՍԴ/0160/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի սեպտեմբերի 26-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ավետիք Գևորգի Նավոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով թիվ 91100821 (ՍԴ/0160/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 2-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0160/01/23 քրեական վարույթն ստանձնելու և 2023 թվականի հոկտեմբերի 9-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 2-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է

կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 20-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0160/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի նոյեմբերի 27-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի հունիսի 21-ին Ավետիք Գևորգի Նավոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա հանդիսանալով ՀՀ ՊՆ 52258 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի դիպուկահարների ջոկի հրամանատար, պայմանագրային զինծառայող, կոչումով սերժանտ պարտավոր լինելով 2021 թվականի փետրվարի 16-ին ժամը 10.00-ին ներկայանալ ծառայության վայր հանդիսացող ՀՀ ՊՆ 52258 զորամաս՝ մասնակցելու մարտական հերթապահությանը նախորդող նախապատրաստական փուլին, 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ առանց հարգելի պատճառների նշված ժամանակում չի ներկայացել ծառայության վայր, այլ միայն 2023 թվականի փետրվարի 19-ին ժամը 18.00-ի սահմաններում ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ 52258 զորամաս, զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելով 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տևողությամբ»*[1]:

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն գործով վարույթի մասնավոր մասնակից է հանդիսանում մեղադրյալ Ավետիք Գևորգի*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 187-188:

Նավոյանը, ով բնակվում է Դատարանի ապասարկման տարածքից դուրս, քրեական վարույթով վկաները բնակվում են Արագածոտնի մարզում: Այսինքն՝ վարույթի օժանդակող անձինք և մեղադրյալ Ավետիք Նավոյանը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքին մոտ բնակավայրում:

Վարույթով որպես հանրային մեղադրող ներգրավված է Արարատի կայազորի զինվորական դատախազության դատախազ Գ.Ներսիսյանը, ով չի առարկել ներկայացված տարածքային ընդդատությունը փոփոխելու հարցի շուրջ:

Այսպիսով, Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական վարույթով մեղադրյալ Ավետիք Գևորգի Նավոյանը և վկաները բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

Տարածքային ընդդատության փոփոխման միջնորդություն է ներկայացրել մեղադրյալ Ավետիք Գևորգի Նավոյանը:

Այսինքն՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու՝ Օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անհրաժեշտ երկու պայմանները միաժամանակ առկա են:

Ավելին՝ Դատարանի գնահատմամբ քրեական դատավարության արդյունավետ կազմակերպման, քրեական վարույթի արագ, լրիվ և օբյեկտիվ քննության նկատառումներից ելնելով՝ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելն անհրաժեշտություն է:

Այսպիսով, ելնելով սույն քրեական գործի առանձնահատկություններից, Դատարանը գտնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը պետք է փոփոխել և վարույթն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, քանի որ քրեական վարույթով մեղադրյալ Ավետիք Գևորգի Նավոյանը և վկաները բնակվում են այդ դատարանի դատական տարածքին մոտ բնակավարում, ավելին՝ սույն դեպքում տարածքային ընդդատության փոփոխումը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահերից: (…)»[2]:

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 25-27:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն որոշման իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշման հիմքում դրված հանգամանքները՝ հարկ է ընդգծել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը եկել է եզրակացության, որ քրեական վարույթով մեղադրյալը և վկաները բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքին մոտ բնակավարում, այն դեպքում, երբ տվյալ հարցը կարգավորող հատուկ իրավակարգավորմամբ, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածով, ամրագրված է ոչ թե տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքին մոտ, այլ այդ դատարանի (սույն դեպքում՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի) դատական տարածքում բնակվելու նախապայմանը, ընդ որում նշված նախապայմանն էլ պետք է առկա լինի վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության պարագայում:*

Սույն դեպքում քրեական գործի նյութերից հետևում է, որ մեղադրյալ Ավետիք Գևորգի Նավոյանը փաստացի բնակվում է Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հոկտեմբերի փողոցի 15-րդ տանը և տվել է իր համաձայնությունը՝ տարածքային ընդդատությունը փոխելու համար:

Վկա Զարզանդ Հովհաննեսի Բարսեղյանը հաշվառված է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արտենի գյուղի Պ.Սևակի փողոցի 1-ին տանը, փաստացի բնակվում է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Այգեստան փողոցի 7-րդ տանը, իսկ վկա Հայկ Հրաչիկի Հակոբյանը փաստացի բնակվում է Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Հարթավան գյուղի 15-րդ փողոցի 3-րդ տանը:

Վերոշարադրյալից հետևում է, որ տվյալ դեպքում քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից ոչ մեկը չի բնակվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական

տարածքում, հետևաբար՝ սույն վարույթն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին (…):

Վերոգրյալի հաշվառմամբ դատարանը գտնում է, որ տարածքային ընդդատությունը փոխելու՝ վերը նշված նախապայմանի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջից: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ/0160/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 38-41:

վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[4]*:*

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Մեղադրյալ Ա.Նավոյանը նախնական դատալսումների ժամանակ միջնորդել է քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթն ուղարկել

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան[5]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստելով, որ մեղադրյալ Ա.Նավոյանը բնակվում է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի սպասարկման տարածքից դուրս, իսկ քրեական վարույթով վկաները բնակվում են Արագածոտնի մարզում՝ որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին այն հիմնավորմամբ, որ մեղադրյալը և վկաները բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքին մոտ բնակավայրում[6]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից ոչ մեկը չի բնակվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում՝ գտել է, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հիմքն առկա չէ[7]:

14. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալի միջնորդությամբ փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որպես վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու պարտադիր պայման նախատեսում է ոչ թե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության **տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս,** այլ **առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում**

---

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, դատական նիստի արձանագրություն, թերթ 24:
[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

բնակվելը: Մինչդեռ սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ որպես մեղադրյալ Ա.Նավոյանի հաշվառման և բնակության վայր նշված է Արմավիրի մարզը, վկա Հ.Հակոբյանի հաշվառման և բնակության վայր՝ Արագածոտնի մարզը, վկա Ջ.Բարսեղյանի հաշվառման հասցեն թեև նշված է Արագածոտնի մարզը[8], սակայն, ըստ վարույթի նյութերի, վերջինս բնակվում է Արմավիրի մարզում[9]: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում գտում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

16. Ամփոփելով՝ գտնում եմ, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ/0160/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ավետիք Գևորգի Նավոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով թիվ ՍԴ/0160/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

---

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 275:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 151: